ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՌԱՋ*

Հայկական պատվիրակության՝ (Պողոս Նուբար, Ա. Ահարանյան) Հաշտության կոնֆերանսին ներկայացրած հուշագիրը (թարգմանված է հուշագրի ֆրանսերեն բնագրից)

Հայ ազգի անունից, որի ընտրված պատվիրակները, գալով Հայաստանից ու աշխարհի բոլոր մասերից, ներկայումս կոնֆերանս են գումարել Փարիզում, Հայոց ազգային պատվիրակությունը, պատիվ ունի Հաշտության կոնֆերանսին ներկայացնելու ներկա հուշագիրը, որն ամփոփում է հայ ազգի տենչերն ու պահանջները:

Մեր ազգը, շարունակ ճնշվելուց հետո, այսօր, համաշխարհային վերիվայրումի վախճանին, գտնվում է պատառ-պատառ եղած ու արյունաքամ վիճակում, բայց կենդանի և ավելի քան երբեք վառ հավատով՝ ազատագրելու և իրականացնելու համար իր ազգային իդեալը՝ շնորհիվ դաշնակից պետությունների հաղթանակին, որոնք իրենց դրոշների վրա մակագրել են Իրավունքի, Արդարադատության և Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները:

Հիմնվելով այդ վսեմ սկզբունքների վրա՝ Հայոց Ազգային Պատվիրակությունը՝ թարգմանը հանդիսանալով միաձայն քաղաքանքի ամբողջ ազգի, որի մի մասն արդեն անկախ հանրապետություն է հիմնել Կովկասում, հայտարարեց ամբողջ Հայաստանի անկախությունն ու իր 1918թ. նոյեմբերի 30-ի հայտագրով այդ մասին զեկուցեց դաշնակից կառավարություններին:

Հայաստանն իր անկախության իրավունքը ձեռք է բերել կամովին և ինքնաբերաբար մասնակցելով պատերազմին՝ կովկասյան, սիրիական և ֆրանսիական երեք ճակատների վրա, և հարյուր հազարավոր տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով, որոնք ընկան՝ որպես համաձայնության պետությունների դատին իր հավատարմության զոհեր, որովհետև Հայաստանը, սկզբից և ետ, այդ նկատել է որպես իր սեփական դատը: Հայաստանն իր հսկայական զոհերով ռազմաբեմում, կոտորածի դաշտերում և տեղահանություններ-

* Տպագրվում է ըստ դարեսկզբին Թիֆլիսում տպագրվող «Աշխատավորի գրադարան» մատենաշարի հրատարակության («Աշխատավորի գրադարան», N15, տպ. «Աշխատավոր», Թիֆլիս, 1915):

րի երկար ճամփաներին՝ մահվանը վճարել է այնպիսի ծանր տուրք, որպիսին ոչ մի ուրիշ պատերազմող ազգ չի տվել: Դաշնակիցների հաղթանակը նրան ազատեց ճնշողների լծից, և նրա դժբախտությունները կբավեին արդարացնելու նրա անկախության իրավունքը, բայց, ինչպես ստորև կապացուցվի, նա ունի և պատմական, ազգագրական, քաղաքական ու բարոյական բնույթ կրող այլ իրավունքներ, որոնք նվազ կարևորություն չունեն:

* * *

Երկար ժամանակ Տաճկաստանի նկատմամբ եվրոպական պետությունների քաղաքականության մեջ իշխող տեսակետն է եղել օսմանյան կայսրության ամբողջականությունը: Եվրոպական մեծ պետությունները, հաշտեցնելու համար Տաճկաստանի ամբողջականությունն ու թուրքերի կողմից ճնշված քրիստոնյա ժողովուրդների հանդեպ իրենց զգացած պարտականությունները, շռայլում էին «ռեֆորմների» խոստումներ ոչ թուրք ժողովուրդների համար՝ որպեսզի նրանք վայելեն հավասար վերաբերմունք (օրենքի կողմից), առանց ցեղի կամ դավանանքի խտրության:

Փաստերը ցույց տվին, թե որքան խախուտ հիմքի վրա էր դրված այդ հույսը: Թուրքերը, ծեր թե երիտասարդ, ռեֆորմների մեջ տեսել են միայն Եվրոպան խաբելու մի միջոց և գործնականում, ճարպկորեն օգտագործելով պետությունների հակամարտությունները, նրանք կարողացել են այնպես սարքել, որ խուսափեն այդ ռեֆորմներից: Քրիստոնյա ժողովուրդներն այդ կերպով կասկածելի դառնալով Դռան աչքին, դրանով ավելի դժբախտացան, քան ինչ որ էին օսմանյան պետության գազաթնակետի վրա գտնված ժամանակ:

Վեց դարից ի վեր օսմանյան տիրապետության տակ Հայաստանի պատմությունն այլ բան չէ, եթե ոչ մի երկար մարտիրոսագրություն, պարբերական կոտորածներով: Այդ հալածանքներն առանձնապես դաժան բնույթ ստացան վերջին տարվա ընթացքում՝ այն ժամանակից, երբ հայերը պահանջեցին բարելավել իրենց վիճակը:

Սան-Մտեֆանոի (1877թ.) և Բեռլինի (1878թ.) դաշնագրերը, Կիպրոսի պայմանագիրը, 1895թ. դեսպանների կողմից Դռանը ներկայացված բարենորոգումների ծրագիրը միջազգային ակտեր են՝ թուրքական ռեժիմի ապօրինությունները վերացնելու համար: Պարզվեց, որ նրանք ամենքն էլ անբավարար են, քանի որ եվրոպական դիվանագիտությունը միշտ էլ բավականացած է կիսամիջոցներով: Ամեն անգամ, որ Եվրոպան խոսել է ռեֆորմների մասին, Թուրքիան պատասխանել է կոտորածներով, և Եվրոպան լռել է:

1908թ. հայերն ամեն կերպ աջակցում են երիտասարդ թուրքերին՝ տապալելու բռնապետությունը: Երիտասարդ թուրքերը նրանց օգնությունը ձեռք բերելու համար խոստացել էին «ազատության, հավասարության ու եղբայրության» մի դարաշրջան: Հայերը հավատացին այդ խոստումներին: Մի տարի անցավ, որ տեղի ունեցան Ադանայի կոտորածները, և մոտ 20000 հայեր կոտորեցին: Բայց Թուրքիայի ամբողջականության պահպանման քաղաքականությունն այս անգամ էլ է արգելում պետությունների միջամտությունը:

Միայն 1912-1913 թվականին, բալկանյան պատերազմներից հետո, բալկանյան հարցը լուծելու համար գումարված Լոնդոնի կոնֆերանսի ժա-

մանակ է, որ մեծ պետությունները, պատասխանելով ամբողջ հայ ազգի թախանձանքներին, միջամտեցին Դռան մոտ՝ ձեռք բերելու համար Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում հիշված բարենորոգումների գործադրությունը:

Պոլսի դեսպաններին հանձնարարվեց մշակել մի նախագիծ և խմբագրել նրա վերջնական բնագիրը: Երկար ու փութաջան բանակցություններ վարվեցին Դռան ընդդիմություններին հաղթելու համար: Վերջ ի վերջո նրան ընդունել տվին մի բնագիր, որը սակայն կրճատված և այլանդակված էր՝ միջամտությամբ Գերմանիայի, որ չէր դադարել աջակցելուց տաճկական դիվանագիտությանը: Երիտասարդ թուրքերը փութացին պատռել այդ համաձայնությունը, որ ստորագրվել էր 1914թ. փետրվարի 8-ին, հենց որ Գերմանիան առաջ բերեց պատերազմը: Դա չարգելեց, որ երիտասարդ թուրքերը մի անարժան համաձայնություն առաջարկեին հայերին. նրանք առաջարկում էին միանալ թաթարների հետ՝ ապստամբվելու համար Ռուսաստանի դեմ, և փոխարենը՝ Դուռը ավտոնոմիա պետք է տար հայերին: Գերմանիան երաշխավոր էր դառնում իր զինակցի առաջարկին: Հարկ կա՞ ասելու, որ հայերը զզվանքով պատասխանեցին: Երիտասարդ թուրքերի վրեժխնդրությունը՝ սառնորեն ծրագրված, նախօրոք հայտարարված, սարսափելի եղավ:

Մենք չենք պատմելու ո՛չ կոտորածները, ո՛չ էլ տեղահանությունները, որոնց դիմակի տակ կատարվեցին կոտորածները: Դրանց նկարագրությունները, ջախջախիչ վկայություններով հաստատված, կարելի է գտնել լորդ Բրայսի կողմից պառլամենտին ներկայացված Կապույտ գրքում, Մ. Մորգենթաուի և Մ. է. Այնշտայնի գրքերում, նույնիսկ գերմանների գրած բրոշյուրներում, ինչպիսիք են՝ դոկտոր Նիեպաժի տեղեկագիրը, Փարիզում նոր հրատարակված դոկտոր Լեպսիուսի բրոշյուրը, Հարրի Շտիվրմերի գիրքն և այլն: Բայց կարևոր է մանավանդ շեշտել, որ ամբողջ մի ազգի բնաջնջման գործը մեքոդիկ կերպով կազմակերպված է կառավարության կողմից, որի հրամանները շրջաբերականներով ու հեռագրերով հաղորդված են հայկական բոլոր վիլայեթների պաշտոնյաներին: Այդ փաստաթղթերից շատերը գտնված են և հրատարակված:

Կառավարությունը ոչինչ չի թողել դիպվածի քմահաճույքին՝ ո՛չ սպանությունները, ո՛չ կողոպուտները, ո՛չ չարչարանքները, ո՛չ բռնաբարությունները, ո՛չ բռնի իսլամացումները, ո՛չ սովամահությունը:

Այդպիսի փորձություններից հետո՝ մեր դատը լսվեց: Դաշնակիցները արդեն իրենց պետական մարդկանց հանդիսավոր հայտարարություններով հանձնառու են եղել Հայաստանը վերջնականապես ազատագրելու՝ պատմության մեջ անօրինակ մի բռնապետությունից: Ժողովուրդների պատերազմը, որին հետևեց ժողովուրդների խաղաղությունը, Հայաստանին պետք է բերի ամբողջական անկախություն:

Հայերն արյան հեղեղներ են հոսեցրել այդ անկախությունը ձեռք ձգելու համար՝ ո՛չ միայն իրենց կոտորված մարտիրոսների և զարհուրելի տանջանքներով սպանված տարագիրների արյունը, այլև իրենց կամավորների և զինվորների ռազմի դաշտում թափած արյունը. նրանք կռվել են դաշնակիցների կողքին՝ իրենց հայրենիքի ազատության համար: Հայերը կամովին և ինքնաբերաբար մարտիկներ տվին բոլոր ռազմաճակատներում: Ֆրանսիայում, օտար լեգիոնի մեջ, նրանք փառքով պսակվեցին իրենց քաջությամբ: Նրանցից հազիվ մի տասնյակ մարդ վերապրեց: Հա-

յերին գտնում եք և Սիրիայում ու Պաղեստինում, Արևելքի լեգիոնում, ուր նրանք փութացին ազգային պատվիրակության կոչի վրա: Այդ Արևելքի լեգիոնը, որի մեջ հայերը գերակշիռ տարրն էին կազմում, առանձին վերցրած, կազմել է ֆրանսիական ամբողջ կոնտինգենտի կեսից ավելին: Նրանք այնտեղ մեծ մասնակցություն են ունեցել վճռական հաղթանակում գեներալ Ալլենբիի, որ ըստ արժանվույն գնահատեց նրանց քաջությունը: Վերջապես՝ նրանց տեսնում եք Կովկասում, ուր, առանց խոսելու ռուսական բանակում բոլոր ճակատների վրա ծառայող 150000 զինվորների մասին, 30000 զինվորներից բաղկացած մի բանակ և հազարավոր կամավորներ անդադար կռվեցին՝ գեներալ Նազարբեկյանի գերագույն հրամանատարության տակ: Այս զորախմբերով է, որ հայերը, Ռուսաստանի տապալումից և Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո, խաբված և լքված վրացիներից ու դավաճանված՝ թուրքերին միացած թաթարների կողմից, պաշտպանեցին ռազմաճակատը և յոթ ամիս ուշացրին թուրքական առաջխաղացումները: Նրանք այս կերպով նշանակալից ծառայություն մատուցեցին Միջագետքի բրիտանական բանակին, ինչպես հայտարարեց այդ լորդ Ռոբերտ Սեսիլը՝ լորդ Բրայսին ուղղված մի պաշտոնական նամակում և Համայնքների պալատում արված մի հարցապնդման իր պատասխանում: Բացի այդ, հայերը մինչև զինադադարի կնքումը, թուրքերին ցույց տված իրենց դիմադրությամբ՝ դեպի իրենց ճակատ քաշեցին Պաղեստինի տաճկական զորախմբերն ու այդ կերպով անուղղակիորեն նպաստեցին Սիրիայում դաշնակից բանակի հաղթանակին:

Հետևաբար, հայերն եղած են իսկական պատերազմողներ. պատերազմի պատճառով նրանց կրած կորուստները, որոնք չորս ու կես միլիոնանոց մի ժողովրդի մեջ անցնում են մեկ միլիոնից, համեմատաբար, պատերազմողներից որևէ մեկի կորուստներից շատ ավելի ծանր են:

ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայերը, որ դարերից ի վեր հպատակ են օսմանյան տիրապետության, տարածված են կայսրության բոլոր մասերում: Նրանց մի մեծ մասը գաղթած է արտասահման՝ Եվրոպա, Ռուսաստան, Ամերիկա, փախչելու համար բռնապետությունից: Անկասկած՝ այդ գաղթածներից ամենամեծ մասը կվերադառնա իր ազատված հայրենիքը: Հետևաբար նկատի են առնվելու պատերազմից կամ, ավելի շուտ, 1894-1896 թվականների համիդյան կոտորածներից առաջվա վիճակագրությունները, քանի որ այդ կոտորածները ոչ միայն 300000 զոհ խլեցին հայերից, այլ պատճառ դարձան ժողովրդի մի նշանակալի մասի գաղթելուն: Անթույլատրելի է, որ ոճիրներից օգուտ քաղեն նրանց հեղինակները, և նրանք հասնեն իրենց հրեշավոր ծրագրի նպատակին՝ ապահովել մահմեդականների մեծամասնությունն ու գերակայությունը: Պետք է նկատի առնվի ողջ թե մեռած բոլոր հայերի ձայնը: Եթե հայերը բացարձակ մեծամասնություն չունեն հայկական վիլայեթներում ապրող ցեղերի ամբողջականության վրա, նրանք մեծամասնություն են կազմում, եթե համեմատենք այդ ցեղերից յուրաքանչյուրի հետ: Պատերազմից առաջ և նախքան 19-րդ դարի վերջի գաղթականությունները, հայերի թիվը հայկական կոչված վեց վիլայեթներում, Տրապիզոնի վիլայեթում և Կիլիկիայում ավելի էր, քան թուրքերինը և քրդերինը՝ առանձին վերցված, և նույնիսկ հավասար թուրքերի և քրդերի միացյալ

թվին: Այդտեղ կային 1403000 հայեր՝ 943000 թուրքերի և 482000 քրդերի դեմ:

Մյուս կողմից, միայն հայ ազգաբնակչությունը չի եղել տուժողը: Դեռ Բալկանյան պատերազմները ծանր կորուստներ էին պատճառել սուլթանի բանակներին, որոնց կոնտինգենտը համարյա բացառապես հավաքված է եղել Ասիայում: Ներկա պատերազմում վերջացան նրա զորահավաքի աղբյուրները. քաղաքացիական ազգաբնակությունը սաստիկ տուժել է ոչ միայն ռուսների գրաված շրջաններում, այլ ամբողջ Ասիայում, ուր նա կոտորվել է համաճարակներից, որոնք, խնամքի ու դեղորայքի չգոյության պատճառով, սոսկալի ավերածություն են գործել մահմեդականների մեջ:

Եվ, սակայն, թիվը չէ միակ գործոնը, որ պետք է ծառայի որոշելու, թե ինչ տերրիտորիաներ են մտնելու մեր պետության մեջ և որոնք են լինելու նրա սահմանները: Պետք է հաշվի առնել ոչ միայն մեռածներին, այլև քաղաքակրթության աստիճանը, ինչպես և այն փաստը, թե հայերը միակ տարրն են, որ ի վիճակի է այժմ՝ քաղաքակրթության և պրոգրեսի ընդունակ մի պետություն կազմելու:

Հայկական պետության մեջ մտնելիք մահմեդական և ոչ հայ տարրերը կվայելեն հաշտության կոնֆերանսի ընդունած սկզբունքներով երաշխավորված ազատությունները:

Այդ ժողովուրդներից ամենակարևորն են քրդերը: Նրանք բաժանվում են նստակյաց և թափառական ցեղերի: Մեծ մասը լեռնականներ են, որոնք ավազակների հռչակ ունեն և որոնք միշտ կոտորածի գործիք են եղել տաճիկ կառավարության ձեռքին: Նրանց քաղաքական զարգացումը չի անցել աշիրեթային ռեժիմից: Քրդերի կարևոր մի մասը հաստատված է Քուրդիստան կոչված գավառում, Դիարբեքիրի և Վանի վիլայեթների հարավային մասում (Հեքքեարի): Այդ գավառները կգատվեն հայկական պետությունից: Մյուս՝ նստակյաց քրդերը կապրեն Հայաստանում, օրենքների պաշտպանության տակ:

Միաժամանակ պիտի նկատել, որ քրդերից շատերը հայկական ծագում ունեն և տաճկական ազդեցությունը սահմանափակվելուն պես՝ հեշտ կլինի համերաշխություն հաստատել հայ և քուրդ ցեղերի միջև. հայերն այդ դեպքում կոչված կլինեն քուրդերին վայելել տալու քաղաքակրթության բարիքները՝ հօգուտ երկու ժողովուրդների փոխադարձ շահերի:

Ինչ վերաբերում է թափառաշրջիկներին, հատուկ օրենքներ կկանոնավորեն ամառային արոտատեղիներում (յայլաղ) խաշնարածության պայմանները՝ ապահովելու համար երկրի ապահովությունն ու արգելելու ավերումները:

* * *

Վերոհիշյալ սկզբունքների համաձայն, անկախ պետությունը պետք է կազմվի հետևյալ հայկական շրջաններից.

1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սըվազի, Էրզրումի և Տրապիզոնի յոթ վիլայեթները (համաձայն 1914թ. բարենորոգումների ակտի), դուրս ձգելով Տիգրիսից հարավ և Օրդու-Սըվազ գծից արևմուտք գտնված շրջանները:

2. Կիլիկյան չորս սանջակները, այսինքն՝ Մարաշ, Խոզան (Միս), Ջեբել-Բերեքեթ և Աղանա՝ Ալեքսանդրետտի հետ միասին:

3. Կովկասի հայկական հանրապետության ամբողջ տերրիտորիան, որ պարունակում է՝ Երևանի ամբողջ գավառը, նախկին Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Ղարսի գավառը (բացի Արդահանից հյուսիս գտված շրջանից):

Գալով սահմաններին, պետք է հիշեցնենք, որ երբ Արդուլ Համիդը գծել տվեց վիլայեթների վարչական սահմանները, կարգադրեց, որ կամայականորեն նրանցից յուրաքանչյուրին կցվեն ոչ հայկական շրջաններ, այնպես որ մահմեդականները մեծամասնություն կազմեն: Այդ նույն դիտավորությամբ՝ նա հայաբնակ շրջաններում հաստատեց չերքեզների և Ռուսաստանից կամ Բալկաններից տեղափոխված այլ մահմեդականների գաղութներ: Ուստի հարկ կլինի սահմանների ընդհանուր վերաքննություն կատարել:

Մենք պահանջում ենք, որ հատուկ խառը հանձնաժողովների հանձնարարվի սահմանների այդ ուղղումը՝ նրանց մանդատ տալով՝ որոշել հայկական պետության բոլոր սահմանները, նկատի առնելով աշխարհագրական, ցեղագրական, պատմական, տնտեսական ու ռազմագիտական պայմանները:

Տրապիզոնի վիլայեթում, որ եղել է նախկին Պոնտոսյան թագավորության մայրաքաղաքը, հույների թիվն ավելի է հայերից. բայց Տրապիզոնի նավահանգիստն ամբողջ Բարձր Հայքի միակ կարևոր ելքն է դեպի Սև ծովը: Հունաստանն աչք չունի այդ վիլայեթի վրա, որ շատ հեռու է այն գլխավոր կենտրոններից, որտնց նա պահանջում է ժողովուրդների իրավունքների հիման վրա, և կատարյալ համաձայնությամբ հելլեն կառավարության հետ, որ այդ հարցում երևան հանեց հավասարակշռության մի լայն հոգի, որը չենք կարող չգնահատել, պահանջում ենք հայկական պետությանը կցել Տրապիզոնի նահանգի մի մասը: Նրա հույն ազգաբնակությունը կարող է վստահ լինել, որ հայկական վարչությունը նրան կապահովի իր կրոնի և լեզվի հանդեպ հարգանքը՝ եղբայրության և համահավասար արդարության ռեժիմի տակ:

Մյուս կողմից պետք է հայտարարենք, որ Հունաստանին տրվելիք շրջանների հայերն էլ իրենց կողմից վստահության և ուղղամտության նույն ոգով են ընդունելու հելլեն կառավարության տակ իրենց ստանալիք դրությունը:

Ինչ վերաբերում է Կիլիկիային կամ Փոքր Հայքին, կարիք կա ասելու, որ նա էապես հայկական է և միշտ էլ կազմել է Հայաստանի մասը: Նա մոտ չորս դար եղել է հայկական վերջին թագավորության բնակավայրը՝ մինչև այն օրը, երբ հաղթվելով արաբներից՝ նրա վերջին թագավորը՝ Լևոն V-ը, գերի տարվեց Եգիպտոս, և ապա ազատվելով՝ իր վերջին օրերն ապրեց Փարիզում: Նա թաղվել է Սեն-Դընիի մայր տաճարում, ուր նրա շիրիմը կա մինչև այսօր էլ:

Զեյթունի շրջանը, որի լեռնականները, կռվող ու ազատասեր ցեղից, շարունակ բուռն կերպով հարած են եղել իրենց ազգային իրավունքներին, միշտ էլ վայելել է կեսանկախություն: Ավելորդ չէ հիշել նաև, որ հնուց ի վեր, ինչպես այսօր էլ, Սիսի կաթողիկոսի, Կիլիկիայի կրոնական գերագույն պետի աթոռանիստ քաղաքն է եղել Սիսը, Կիլիկիայի մայրաքաղաքը:

Կիլիկիան ունի հայ և թուրք ազգաբնակություն: Արաբ տարրը քիչ է: Պատերազմից առաջ Կիլիկիայում եղել են միայն 20000 սիրիացիներ, մինչ հայերի թիվն 200000-ից ավելի էր, չնայած 1909թ. Ադանայի կոտորա-

ծի հետևանքով առաջացած ահագին գաղթականության: Ստորև, պատմական մասում, կարելի է գտնել այլ ապացույցներ, որոնք հաստատում են Կիլիկիայի վրա մեր անվիճելի իրավունքը: Հետևաբար, անհասկանալի է մնում, թե սիրիական կոմիտեն ի՞նչ սկզբունքի հիման վրա է պահանջում Կիլիկիան, իբր Սիրիայի մի մասը, և իր սահմանը տարածում մինչև Տավրոս, ինչպես այդ երևում է այդ կոմիտեի հրատարակած և Մարսելի սիրիական կոնգրեսին ներկայացրած քարտեզից: Ոչ մի քարտեզ, ժամանակակից թե հին աշխարհի, Կիլիկիան չի պարփակում Սիրիայի մեջ, որի հյուսիսային սահմանն է ոչ թե Տավրոսը, այլ Ամանոսը, և անցնում է Ալեքսանդրետի մոտից:

Հայ ժողովուրդը, զրկվելով Կիլիկիայից, անջատվելով իր բնական նավահանգիստներն եղող Մերսինից և Եումուրթալըկից (Այաս)՝ կդատապարտվեր թառամելու իր լեռներում, առանց հարաբերության Միջերկրական աշխարհի հետ և առանց շնչելու, ինչպես ասում է, շատ ճիշտ մի արտահայտություն, Հայաստանը զրկված կլիներ իր թոքերից: Նրա կյանքն ու ապագան Միջերկրական ծովի վրա են:

Բացի այդ, Սիրիական կոմիտեի թեզը չի կարող հաշտեցվել ֆրանսիական կառավարության և հայկական պատվիրակության միջև կայացված համաձայնության հետ 1916 թվականին, երբ հայկական պատվիրակությանը տեղեկացվեց՝ դաշնակից պետությունների միջև ասիական Թուրքիայի մասին կայացված համաձայնագրի մեջ Հայաստանին վերաբերող հոդվածը: Պատվիրակությունն այդ ժամանակ երախտագիտությամբ համաձայնվելով դաշնակիցների ցանկությանը, որոնք նրան խոստանում էին Կիլիկիայի և արևմտյան երեք նահանգների թուրքական լծից ազատագրումը, փութաց հայ կամավորներ տալ՝ նպաստելու համար նրանց հայրենիքի ազատումին: Այդ կամավորներից ավելի քան 5000-ը մտան Արևելքի լեգիոնի մեջ, ուր սիրիացիները միայն 3 կամ 4 հարյուր էին թվով, և իրենց մասնակցությունն ունեցան Պաղեստինի վճռական հաղթանակին, որին կպարտի այսօր Սիրիան իր ազատագրությունը:

Մենք այս փաստերը հիշեցինք միայն նրա համար, որ հաշտության կոնֆերանսը հնարավորություն ունենա իր վճիռները կայացնել իրազեկ լինելով գործին և համաձայն ազգությունների սկզբունքի, որը նա հիմք է ընդունել իր խորհրդածությունների համար:

Եվ սակայն, եթե հայերի և սիրիացիների միջև սահմանագծի մասին տարակարծություն կա, պիտի ասենք, որ սիրիացիների նկատմամբ մեր բարեկամության ու համերաշխության զգացումները, որոնք ամրապնդված են երկու ժողովուրդների դարտվոր ընդհանուր տառապանքներով, դրանով չեն թուլանալ, և ոչ ոք մեզնից ավելի չի ցանկանում, որ կազմվի ազատ ու հզոր Սիրիա, իբր հարևանը հայկական պետության:

Մենք պահանջում ենք, որ այդ կերպով սահմանագծված Հայաստանը դրվի դաշնակից և գործակից պետությունների կամ ազգերի դաշնակցության հավաքական երաշխավորության տակ, որոնք երաշխավորելու են նրա ամբողջականությունն ու նրա տերրիտորիայի անձեռնմխելիությունը: Բացի այդ, նրանք կհանձնարարեն պետություններից մեկին, որ առաջին տարիների ընթացքում իր օժանդակությունը ցույց տա նոր պետությանը՝ երկրի կազմակերպման և տնտեսական ու ֆինանսական վերականգնման համար: Այդ օժանդակությունը ոչ մի կերպ չպետք է ստանա պրոտեկտորատի կերպարանք, մինչև անգամ ժամանակավորապես, այլ

պետք է կատարվի հօգուտ հայ ազգի, այնպես որ պետության գերիշխանությանը ոչ մի հարված չհասցվի:

Հայոց ազգային պահանջների ծրագիրը կարող է ամփոփվել հետևյալ կերպով: Մենք պահանջում ենք.

1. Ճանաչել հայկական անկախ պետությունը՝ կազմված յոթ վիլայեթների, Կիլիկիայի և Կովկասի հայկական հանրապետության տերրիտորիաների միացումով:

Երաշխավորող պետությունների պատվիրակներից բաղկացած սահմանագծված հանձնաժողովներին, աջակցությամբ հայկական կոմիսարների, հանձնարարվում է տեղում որոշել Հայաստանի վերջնական սահմանները: Այդ հանձնաժողովները պիտի ունենան ամենալայն լիազորություններ՝ գերիշխանորեն վերացնելու բոլոր այն դժվարությունները, որոնք կարող են պատահել սահմանակից երկրների հետ՝ քարտեզում գծված սահմանը հողի վրա անցկացնելու ժամանակ:

2. Այս կերպով կազմված հայկական պետությունը դրվում է հավասարական երաշխավորության տակ դաշնակից պետությունների և Միացյալ Նահանգների, կամ Ազգերի դաշնակցության (ընկերության), որին նա պահանջում է անդամակցել:

3. Հաշտության կոնֆերանսը պետություններից մեկին տալիս է հատուկ մանդատ՝ Հայաստանին օժանդակելու մի անցողակի ժամանակաշրջանի համար: Այդ մանդատն ունենալիք պետությունն ընտրելու համար պետք է խորհրդակցել այժմ Փարիզում գումարված հայկական կոնֆերանսի հետ, որ ներկայացնում է ամբողջ հայ ազգը: Մանդատի տևողությունը պետք է լինի առ առավելն 20 տարի:

4. Հաշտության կոնֆերանսը պետք է որոշե մի դրամական հատուցում՝ վերականգնելու համար հայ ազգի կրած բոլոր վնասները կոտորածներից, տեղահանություններից, կողոպուտից ու ավերումներից:

Հայաստանն իր կողմից պատրաստ է իր վրա վերցնելու օսմանյան հանրային պարտքի՝ պատերազմից առաջ հաշված գումարից իրեն ընկնող բաժինը:

5. Օժանդակող պետությունը պետք է մանդատ ունենա հետևյալների համար.

ա. Ստիպել թուրք, թաթար և այլ իշխանություններին, որոնք դեռևս գրավում են այդ տերիտորիաները, պարպել դրանք:

բ. Ջեռնարկել ժողովուրդների ընդհանուր զինաթափություն:

գ. Արտաքսել ու պատժել կոտորածներին մասնակցողներին, ժողովուրդների վրա բռնացողներին, թալանի մասնակցողներին կամ զոհերին կողոպտելուց օգտվողներին:

դ. Երկրից դուրս հանել կարգը խանգարող տարրերին և անհնազանդ թափառական ցեղերին:

ե. Վերադարձնել (իրենց երկիրը) մուգաջիրներին (մահմեդական գաղթողներին), որոնք քերված և տեղավորված են համիդյան ու Ժեոնթուրք ռեժիմների օրով:

զ. Վերջապես՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, ներսում և դրսում, իրենց նախկին կրոնին վերադարձնելու բռնի ուժով իսլամացված կամ հարեմներում արգելափակված կանանց, աղջիկներին, երեխաներին և այլն:

Տաճկաստանը պետք է հանձն առնի վճարելու փոխարժեքն իր ռեկվիզիցիաների և իրավատեր հայերին հավասարակշիռ հատուցումով միասին վերադարձնելու իր տերիտորիայում գտնվող անշարժ կայքերը, ինչպես և եկեղեցիները, դպրոցները, վանքերը՝ սրանց հարակից ու պատկանյալ հողերով ու ինչքերով, որոնք որևէ ձևով խլված են հայ համայնքի ձեռքից:

Ինչ վերաբերում է Տաճկաստանում անժառանգ մնացող ազգային կամ մասնավոր հայկական ինչքերին, Պոլսի հայ եկեղեցական իշխանություններն իրավունք են ունենալու դրանք վերցնել իրենց տրամադրության տակ, ծախել և արդյունքը հատկացնել՝ իրենց հոտի կարիքներին:

Հայկական ծագում ունեցող ամեն անհատ, որ ապրում է օտար երկրում կամ դարձել է այդ երկրի քնիկը, հինգ տարվա ընթացքում իրավունք պիտի ունենա, իր և իր անչափահաս երեխաների անունով, դառնալ հայկական քաղաքացի՝ նախապես այդ մասին տեղեկացնելով երկու երկրների պատկանյալ իշխանություններին:

Հայերը լիովին ապավինում են հաշտության կոնֆերանսի արդարադատությանը և չեն կասկածում, որ նա չի նվիրագործի իրենց այդ ազգային պահանջների ծրագիրը: Պետությունները, որոնք այժմ ճանաչում են հայերին, որոնց ազգային զգացումը, կենսունակությունն ու ռազմական առաքինությունները հզոր կերպով արտահայտվեցին այս պատերազմի ընթացքին, կարող են վստահել նրանց: Պետությունները պետք է հաշվի առնեն այն էներգիան, աշխատասիրությունն ու ընդունակությունները՝ մարդկային գործունեության բոլոր արտահայտություններում, որ ունի նշանակալիորեն բազմածնունդ, բարձրագույն կուլտուրայի և պրոգրեսին պատրաստված հայ ցեղը:

Նրանք կարող են վստահ լինել, որ Հայաստանը, այդպիսի տարրերով՝ խաղաղության, արդարության, ազատության ռեժիմի տակ, շնորհիվ Ազգերի դաշնակցության հովանավորության ու մանդատ ունեցող պետության օժանդակության, շուտով կդառնա ծաղկած ու բարգավաճ մի պետություն և արևելքում կլինի խաղաղության ու քաղաքակրթության ամենակարևոր գործոններից մեկը:

Հայկական հարցը միայն տեղական ու ազգային խնդիր չէ. նա շահագրգռում է Եվրոպայի խաղաղությունը, և նրա վճռվելուց է կախված Մերձավոր Արևելքի խաղաղեցումը, պրոգրեսն ու բարգավաճումը:

Փարիզ, 12 փետրվարի, 1919

Պողոս Նուբար
Նախագահ Հայկական Ազգային Պատվիրակության՝
Ա. Ահարոնյան
Նախագահ հաշտության կոնֆերանսին Հայկական Հանրապետության Պատվիրակության՝

Հավելված
Հայկական պատվիրակության՝
Հաշտության Կոնֆերանսին ներկայացրած հուշագրի

ԿԻԼԻԿԻԱՆ

Մի քանի ժամանակից ի վեր, Սիրիական կոմիտեները շրջաբերության են հանել բրոշյուրներ ու քարտեզներ, որոնցով նրան ճգնում են Կիլիկիան միացնել Սիրիային: Արդ, Կիլիկիան իր պատմությամբ, իր ազգաբնակությամբ և իր տնտեսական հարաբերություններով Հայկական Բարձրավանդակի բաղկացուցիչ մասն է և շատ որոշակի է բաժանված Անատոլիայից, ինչպես և Սիրիայից:

Հայկական բոլոր տերիտորիաները կազմում են մի ընդարձակ և շատ բարձր հարթավայր՝ հենված Փոքր Կովկասի լեռնաշղթայի, Պոնտոսի միջանկյալ (միջնորդ) հայկական շղթայի, Տավրոսի, Անտի Տավրոսի և նրանց երկրորդական շղթաների վրա: Մի քանի սարեր հասնում են շատ մեծ բարձրությունների: Այդ երկիրը, ամբողջովին ծածկված լեռներով և կտրտված խորունկ ձորերով, կարելի է համեմատել մի խճճված հանգույցի, որ այդ տարբեր մասերի ներկայացրած տեղագրական համանմանություններով կազմում է միասեռ մի ամբողջություն, աշխարհագրական խիստ բնորոշ մի միավոր: Դա մի հսկայական բերդ է, մի վիթխարի ծառուղի է, որ Սև ծովի արևելյան փակուղուց տարածվում է մինչև Միջերկրական ծովը, և որ կարևոր դեր է խաղացել պատմության մեջ: Նա բաժանում է Անատոլիայի բարձրավանդակը Կուրի դաշտահովիտներից, Պարսկաստանի անապատներից, Միջագետքից ու Սիրիայից:

Քուրդիստանի լեռները ու Ամանոսը, որոնք Հայկական Բարձրավանդակի վերջին ծայրերն են և որոնք գնում են հանգում Միջերկրականին՝ Ռաս-Էլ-Խանզիրի հրվանդանով, նախկին և ժամանակակից բոլոր աշխարհագրությունների համաձայն մի պատնեշ է, որ Սիրիական տափաստանից բաժանում է ոչ մայն Կիլիկիան, այլև ամբողջ Անատոլիան: Նույնպես Անտի-Տավրոսն ու Բուլղարյան լեռները (Բուլղար դաղը) արևմուտքից սահմանակցում են Հայկական բարձրավանդակին և գալիս են վերջանում Մերսինում՝ Միջերկրականի վրա, նրանք Կիլիկիայի չորս սանջակները զատում են Փոքր-Ասիայից: Կիլիկիան իր ջրաբաշխական սիստեմով էլ բոլորովին զատվում-որոշվում է իր երկու հարևաններից և կցվում է Հայկական բարձրավանդակին, որովհետև իր երեք գլխավոր գետերը, Տարսոսը, Սիհունն ու Ջիհունը բխում են Հայկական լեռներից և թափվում են Ալեքսանդրետի ծոցը: Այս ծոցն ինքն էլ, սեղմված Հայկական բարձրավանդակի լեռների երկու թևով՝ նրա բնական ելքն է դեպի ծովը:

Կիլիկիայի պատմությունը նույնն է, ինչ ամբողջ Հայկական բարձրավանդակի: Բարձրավանդակների ստորոտում գտնվելով, նա հանդիսանում է այն անխուսափելի ճանապարհը, որը ուզել են ձեռք ձգել ասիական բոլոր տիրապետողները: Հիթթիթների օրով է, որ Կիլիկիան առաջին անգամ անկախ դարձավ: Դարեր շարունակ նա հանդիսացել է մի ուժեղ թագավորություն, որի դեմ Եգիպտոսի Ռամսեսներն ու Թութմիսներն իզուր կռվեցին՝ մինչև այն օրը, երբ նա վերջնականապես ընկճվեց Նինվեի թագավորների օրով:

11-րդ դարի կեսերին է, որ այդ երկիրը միայն մի անգամ վերստա-

ցավ իր անկախությունը՝ շնորհիվ հայ ժողովրդի և իշխանների, որոնց հոսանքը, սելջուկների ճնշման տակ, ուղղվում է դեպի արևմուտք: Այդ հայկական թագավորությունը տևեց մինչև 14-րդ դարի վերջը՝ իր սահմանները ծավալելով կամ հետ քաշելով բյուզանդական կայսրության մահմեդական սուլթանությունների դեմ մղած իր անվերջ կռիվների ընթացքում: Այդ կռիվների ժամանակ նա համարյա միշտ էլ հենվեց խաչակիրների և նրանց ձեռքով Անտիքում, Ուրֆայում, Կիպրոսում և այլուր հիմնված լատին թագավորությունների վրա, միշտ հարած արևմուտքի ժողովուրդներին իր կրոնով ու վաճառականությամբ, պալատական սովորույթներով ու, մանավանդ, իր թագավորական տան ընտանեկան կապերով: Վերջ ի վերջո նա տապալվեց թուրք-մահմեդական ներխուժումների հեղեղի տակ:

Մենք կանգ չենք առնելու այն փաստի վրա, որ «Սիրիա» տերմինն երբեք չի եղել քաղաքական մի արտահայտություն, և Սիրիացիների թագավորություն գոյություն չի ունեցել: Սելևկոսի, Ալեքսանդրի զորավարներից մեկի, հիմնած Սելևկյան թագավորությունը հունական էր և սիրիական ազգային բնույթ չուներ:

Այսօր մի նոր կերպարանափոխություն է սկսվում Կիլիկիայի պատմության մեջ՝ այն առավելությամբ, որ այնտեղի հնավուրց ավերակների վրա նոր հայրենիք հիմնելու եղող ժողովուրդը նորելուկ չէ, այն նույն ժողովուրդը, որ ամբողջ դարեր ապրել է այնտեղ, կռվել, տառապել և պահանջում է իր նախնիների հողը ժառանգելու իր իրավունքը: Նրա այդ պահանջն այսօրվանից չի սկսվում, այլ այն օրվանից, երբ նա պարտվեց ու լծի տակ մնաց:

Չմոռանանք, որ Կիլիկիան, ինչպես առհասարակ Հայկական բարձրավանդակը, իր ամբողջության մեջ երբեք չի ենթարկված թուրքական տիրապետության: Մինչև 19-րդ դարու կեսը հայերի փոքրիկ խմբակներ մնացել են իրենց լեռների իրական տերը՝ օսմանյան տիրապետության դեմ հարատև կռվով:

Այսպես, Զեյթունի շրջանի պատմությունը վերջին 50 տարիների ընթացքին եղել է կեղեքողի լուծի դեմ ապստամբությունների մի շարան: Զեյթունցիները 1860-ին կռվեցին Խուրշիդ փաշայի 12000-նոց զորքի դեմ. 1862-ին Ազիզ փաշայի 35 հազարանոց կանոնավոր և անկանոն զորքերի դեմ. 1896-ին Էդհեմ փաշայի 40000-նոց բանակի դեմ: Եվ, չնայած այդ ամենին, մինչև մեծ պատերազմի սկիզբը, Զեյթունն երբեք ամբողջովին չի ընկճված. նա միշտ մարմնացրել է Հայաստանի կենդանի բողոքը թուրքական լծի դեմ՝ ճիշտ այնպես, ինչպես արել են Սասունցիները՝ Տավրոսի նույն լեռների մի այլ մասում:

Չմոռանանք, որ Կիլիկիայում էլ, ինչպես ամբողջ Հայաստանում, տաճիկ կառավարության սիստեմատիկ կերպով կազմակերպած կոտորածների միակ նպատակն է եղել արյան մեջ խեղդել հայերի այդ բողոքը և բնաջնջել ամբողջ հայ ազգը, որ գիտակցելով իր իրավունքն ու արժանիքը, համառորեն տենչում էր անկախության:

Կիլիկիայում կա մեր դարավոր իրավունքների մի այլ պահապանն՝ Կիլիկայի կաթողիկոսը, որ դարավոր արյունալի վերիվայրումների ժամանակ, ինչպես այսօր էլ, նստել է Սիսի արքայական ավերակ պալատում և սպասում է Հայկական կառավարության գալուն, որպեսզի նրան հանձնի այդ ավերակները՝ մարտիրոսացած ժողովրդի վերապրողների հետ միասին, որի թիվը ժամանակին հասնում էր կես միլիոնի:

Կիլիկյան չորս սանջակներում ազգաբնակության զանազան տարրերի հարաբերական թիվը պատերազմից առաջ եղել է նույնն, ինչ որ Հայկական բարձրավանդակում: Երկրի գլխավոր ազգաբնակությունը բաղկացած է երեք տարրերից՝ հայերից, որոնց թիվը 200000-ից ավելի էր, թուրքերից՝ թվով 78000 և թուրքմեններից ու թափառաշրջիկ քուրդերից՝ թվով մոտ 60000: Մյուս ցեղերն երկրորդական տեղ են բռնում. ամբողջ Կիլիկիայի կես միլիոն ազգաբնակության մեջ կան 15000 արաբներ և մոտ 20000 քրիստոնյա սիրիացիներ:

Հայաստանի այս ազգաբնակությունը (հայեր, թուրքեր, քուրդեր) կատարելապես տարբեր է Փոքր Ասիայի բնակչությունից, որի գլխավոր տարրերն են թուրքերն ու հույները, և հյուսիսային Սիրիայի ազգաբնակությունից, ուր գերակշռող տարրերն են արաբը, թուրքն ու քուրդը: Քուրդական լեռներից և Ամանոսից հյուսիս արաբները և քրիստոնյա սիրիացիները միասին կազմում են ազգաբնակության հազիվ 7 տոկոսը՝ թե՛ չորս սանջակների և թե՛ անմիջապես սահմանակից գավառակների մեջ. մինչդեռ՝ այդ լեռներից 1 կամ 2 կիլոմետր հարավ՝ արաբ տարրը կազմում է ազգաբնակության կեսից ավելին: Դա նշանակում է, որ Ամանոսն ու քուրդական լեռները կազմում են մի բնական պատվար, ուր գալիս և շատ որոշակի վերջանում է Սիրիայի սահմանը և սկսում է Հայաստանը:

Անկախ այդ պատմական, աշխարհագրական և վիճակագրական կապերից, կան և այլ պայմաններ, որոնք բխում են դրանից, և ամբապես միացնում Կիլիկյան չորս սանջակները Հայաստանի մյուս մասերին: Նախ՝ զգացումի նկատառումները՝ լինելով մեր վերջին թագավորների բնակատեղին, մեր վանքերի ու մեր բերդերի ավերակներով ծածկված հողը, մեր անկախության ու մեր դիմադրության հուշարձանը՝ Կիլիկիան, մինչև մեր օրերն էլ մնում է որպես հայերի ակնածության ու զգվանքի առարկան: Ոչ մի բան չի կարող խզել այդպիսի կապերը. ժողովուրդներն երբեմն կենթարկվեն այդպիսի խզումների, բայց երբեք չեն հաշտվել նրանց հետ:

Բայց այդ զգացումին ավելանում է և տնտեսական հրամայական անհրաժեշտությունը՝ ամեն գնով միացնել Միջերկրականի ծովեզրյա այդ շրջանը իր հայկական ներքնաշխարհին: Ընդարձակ բարձրավանդակն իր արդյունաբերական ու առևտրական զարգացման համար կարիք ունի դեպի ծովը մի ելքի: Հայաստանը զատել այդ ծոցից՝ նշանակում է կտրել նրա տնտեսական զարկերակները, կնշանակի խեղդել նրա արտադրիչ ուժը:

Կա և քարոյական գործոնը, որ ոչ նվազ կարևոր է. հայերն աշխատասեր են, գործունյա, արտադրող, բայց նրանք թաթախված են շրջապատի ճակատագրապաշտ թմրության մեջ: Նրանք արիական, քրիստոնյա մի ժողովուրդ են, բայց խեղդված՝ թուրք-մահմեդական ծովի մեջ: Հայն արևմուտքցի է իր հոգով, բայց ապրում է թուրքերի, թաթարների, այսինքն՝ ամենահետամնաց Արևելքի հետ շարունակական շփման մեջ: Գուցե դա է հայ ժողովրդի դրության ամենից ողբերգական կողմը: Ուստի հասկանալի է, որ Հայաստանն իր հոգու ամբողջ ուժով ցանկանում է սերտորեն կապվել արևմտյան աշխարհի հետ և անմիջական ու արագ շփում ունենալ Արևմուտքի հետ: Դրանից է նրա անհաղթելի ձգտումը դեպի Միջերկրականի լազուրը, որը միայն կարող է ազատել նրան ասիական բանտարգելությունից: Նրա առաջ այդ ելքը փակելը կնշանակի նրան հրել դեպի թուրք-մահմեդական աշխարհը, որի բարքերին նա այլևս չի ուզում հպատակվել և

որոնց դեմ նա ստիպված կլինի կռվել՝ մինչև որ Միջերկրականի վրա այդ դուռը բացվի իրեն համար:

Ասենք նաև, որ հայերը Կիլիկիայում չեն պահանջում ամբողջ Աղանայի վիլայեթը: Մերսինից արևմուտք Իչիլի շրջանը, ուր հայ տարրը սակավաթիվ է, կարող է կտրվել նրանցից:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 19-րդ դարի կեսը՝ հայ ազգաբնակությունը Տաճկահայաստանում կազմում էր բացարձակ մեծամասնություն: Վերջին 50 տարիների ընթացքում, համիդյան և երիտասարդ թուրքերի ռեժիմների օրով, հարյուրավոր հայ գյուղեր, որոնց նկարագրությունը կա մեր 40-50 տարի առաջվա գրականության մեջ, անհետացել են: Թուրք կառավարությունը նրանց տեղը հաստատել է թուրքերի, քուրդերի և Բալկաններից ու Կովկասից գաղթած թուրքերի, չերքեզների: Մյուս կողմից՝ կյանքի անապահովությունը, թշվառությունը, արդարության բացարձակ չգոյությունը, բռնապետությունն ու հալածանքը ստիպել են բազմաթիվ հայերի գաղթել Ռուսաստան, ազատագրված Բալկանյան երկրներն ու Ամերիկա:

Բայց, չնայած թուրքերի բոլոր ճիգերին ու մեքենայություններին, հայ ժողովրդի գլխավոր մասը մնացել է իր հայրենի հողին կապված՝ մի համառ տոկունությամբ. նա կազմել է միշտ, ինչպես և մինչև պատերազմի սկիզբը, Հայաստանի բնակչության ամենակարևոր տարրը՝ ոչ միայն իր իմացական գերակայությամբ և իր տնտեսական գործունեությամբ, այլև իր թվի համեմատական առավելությամբ՝ ազգաբնակության մյուս բոլոր տարրերի վրա:

Ի՞նչ էր Հայաստանի ազգաբնակության թիվը կոտորածներից առաջ և ի՞նչ էր զանազան տարրերի միջև համեմատությունը: Այդպիսի հարցում երբեք չպետք է դիմել թուրքական տվյալներին: Նախ՝ Տաճկաստանում երբեք չի եղել կանոնավոր ցուցակագրություն, ո՛չ էլ ստույգ վիճակագրություններ. թուրք կառավարությունը միշտ դիտումնավոր կերպով կեղծել է վիճակագրությունները՝ հաստատելու համար, որ հայերը միայն անշան փոքրամասնություն են կազմում:

Հիշենք այդ կեղծիքներից մի քանիսը.

Թուրք կառավարությունը Վանի վիլայեթի հայերի թիվը ցույց է տալիս 80000. արդ, ճշգրտապես պարզված է, որ այդ վիլայեթի հայերի թիվը, որոնք վերջին դեպքերի առթիվ ապաստանել են Ռուսաստան, 220000-ից ավելի է:

Հայաստանի մյուս ծայրում, ամբողջ Մարաշի սանջակում թուրք կառավարությունը հաշվում է 4200 հայ. մինչդեռ միայն Մարաշ քաղաքում, Էլիզե-Ռեքլիվի ասելով, կային ավելի քան 20000 հայեր, այն է՝ քաղաքի ազգաբնակության կեսը: Զեյթունը, որ գտնվում է այդ նույն՝ Մարաշի սանջակում, 1880 թվականին տեղում կատարված վիճակագրության համաձայն ունեցել է 27460 հայեր և 8344 մահմեդականներ:

Թուրք կառավարությունը Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Տրապիզոնի, Սըվազի, Աղանայի և Հալեպի 9 վիլայեթների

հայերի ընդհանուր թիվը ներկայացնում է 848000: Մինչ, Հայաստանի և Միրիայի Նպաստամատույց կոմիտեն 1916թ. հրապարակած իր հինգերորդ բյուլետենում վկայում է, որ Հայաստանում կոտորված հայերի թիվն է 600000-850000-ի մեջտեղ, և Զոր, Հալեպ ու Դամասկոս տեղահանվածների թիվն է 486000, Անատոլիայի ներսերը քշածների թիվը 300000, Կովկաս ապաստանածների թիվը 200000: Եթե այդ թվերի վրա ավելացնենք Կովկասում գաղթականներից խոլերայի խլած բազմաթիվ զոհերը, իսլամացվածներին, տանը մնացած կանանց ու երեխաներին, կտեսնենք, որ թուրքերի ցույց տված թիվն իրականի կեսից էլ պակաս է:

Թուրք կառավարության կատարած վիճակագրությունների սովորական սիստեմն է հետևյալը. նախ, առանց շատ փոխելու ամբողջ ազգաբնակության թիվը՝ ըստ կարելվույն նվազեցնել քրիստոնյաների թիվը և տարբերությունն ավելացնել մահմեդականների թվի վրա. 2. զգուշանալ տալ ազգությունների ճշգրիտ թիվը, այլ նրանց խմբավորել ըստ կրոնի. այսպես՝ նրանք զատ-զատ են հաշվում ուղղադավան, բողոքական ու կաթոլիկ հայերին, մինչ՝ մեկ թիվ կազմած են ցույց տալիս մահմեդականներին՝ թուրքերին, թաթարներին, թուրքմեններին, քրդական զանազան ցեղերին, չերքեզներին, զազաներին, արաբներին, պարսիկներին, թափառաշրջիկ բոհեմիացիներին (գնչու) և դեռ շատերին, թեև նրանք շատ տարբեր են իրարից՝ ցեղով, պատմությամբ, տնտեսական կյանքով, կուլտուրական մակարդակով և վերջապես՝ քաղաքական հակումներով:

Ահա այդպիսի հիմքերի վրա են կազմված ցեղագրական բոլոր քարտեզները, որոնք հաճախ են մոլորեցրել եվրոպական հանրային կարծիքը:

(Շարունակությունը՝ հաջորդիվ)